

4653

278309


278309

~~1375~~ ~~1427~~

1208

Ս. ԶԵԼԻՆՍԿԻ

Զ Ո Ր Ի




Թ Ի Փ Լ Ի Ս

Արագատիպ Մշ. Մարտիրոսեանցի,
Միքայելեան փողոց № 81

1899

Ս. ՁԵԼԻՆՍԿԻ -

Զ Ո Ր Ի



4653



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագածոտիկ Մշ. Մարտիրոսեանցի,
Միքայելեան փողոց № 81

1899



Дозволено Цензурою, Тифлисъ, 15-го Февраля 1899 г.

յոյնական թիվով մի մասը չեն մերստ
մեր ի նամարդար նամարդար թիվով

Ջորին (mulus), ինչպէս յայտնի է, խառնածին ընտանի կենդանի է ծնունդ է ձիու (Equus) և էշի (Asinus) մերձաւորութիւնից: Անդրկովկասում յայտնի է երկու տեսակ ջորի՝ մէկը ծնունդ է մատակ ձիու (զամբիկ) և արու էշի, իսկ միւսը՝ արու ձիու և էգ էշի մերձաւորութիւնից: Վերջին տեսակը շատ սակաւ է պատահում:

Ջորին, իբրև խառնածին կենդանի, միշտ մնում է ամուլ, այսինքն՝ երբէք չէ ծնում: Որձ ջորին, երբ հասնում է սեռական հասունութեան, շատ վաղաժող է լինում և ցոյց է տալի մեծ կարողութիւն և եռանդ՝ բոլորովին բնական կերպով կատարում է էգ ջորու հետ սեռական յարաբերութիւնը, բայց ծննդաբերութեան դէպքեր չեն լինում: Այդ հանգամանքը բացատրւում է նրանով, որ արու ջորու

սաղմի մէջ չկան այն փոքրիկ բլրակները, որոնցից արգանդում դարգանում է կենդանին, կամ նրա սաղմի բլրակները կանոնաւորուած և զարգացած չեն միւս կենդանիների սաղմի բլրակների նման: Նոյնպէս մեծ սեռական կորով է ցոյց տալի և էգ ջորին և նրա մերձաւորութիւնից որձ էշի հետ պատահում են երբեմն և ծննդաբերութեան ղէպքեր, թէև նրանից ծնուած ջորիկները թոյլ կազմուածք են ունենում և երկարակեաց չեն լինում:

Ջորին արտաքին տեսքով զանազան յատկութիւններ ունի՝ գլխով, ազանջներով և տոչով նմանում են էշին, իսկ օտաներով՝ ձիուն: Առհասարակ ջորին աւելի նման է էշին քան թէ ձիուն, թէև պատահում են և այնպիսիները, որոնք գլխով աւելի նման են ձիուն: Ջորու կազմուածքի և ֆիզիկական յատկութիւնները բնական չեն, այսինքն ցեղային չեն, ինչ-

պէս ամեն մի կենդանուրնական յատկութիւնները, որովհետև նա ցեղական կենդանի չէ, այլ խառնածին է: Անուամենայնիւ յայտնի է, որ որձ ձիու և էգ էշի մերձաւորութիւնից ծնում են փոքրահասակ ջորիներ և հակառակը՝ որձ էշի և էգ ձիու մերձաւորութիւնից յառաջ են գալիս բարձրահասակ ջորիներ, մանաւանդ երբ հայրը բարձրահասակ է լինում:

Ջորեականները հաւատացնում են, թէ ջորին կարող է աշխատել մինչև երեսնամեայ հասակը և ապրել 40—50 տարի: Ընդհանրապէս նրա երկարակեցութիւնը միջին թւով 25—30 տարուց աւելի չէ լինում, բայց էգ ջորին որձ ջորուց աւելի է ապրում: Հաւատացնում են նոյնպէս, որ այս խառնածին կենդանին սակաւ է հիւանդանում և զանազան տարափոխիկ ախտերին մեծ ընդդիմութիւն է ցոյց տալի: Բնութեամբ ջորին որոշ չափով չար է և յամառ, մանաւանդ որձ և չկռուում

282

283a

ջորին: Էգ ջորին աւելի հեզաբարոյ է և շատերը էշի նման սառնարիւն և անտարբեր են:

Ջորին գորեղ և աշխատութեան մէջ ժիր և անխոնջ է, շուտ չէ դադրում և դիմացկուն է: Ջորին ուտելիղէնի մէջ մեծապահանջ չէ և խորթակով ուտում է ամեն տեսակ ճարակ՝ կանգար, փուշ, դարման և այլն. և ձիու կերած ճարակի կէսն էլ նրան բաւական է: Բացի սրանից, ջորին շոքին և ցրտին աւելի է զիմանում քան թէ ձին, երկար ժամանակ կարող է մնալ ծարաւ, ունի հաստատուն քայլուածք, և շատ հեշտութեամբ տանում է իւր մէջքի վրայ 6—7 փութանոց բեռ դարիվեր տեղերում և նեղ և դժուարագնաց շաւիղներով, և միւլենոյն ժամանակ շատ սակաւ է քրտնում: Այսպիսի գեղեցիկ և օգտաւէտ յատկութիւններ ձիերը չունին:

Ջորին համարւում է ամենաքնտիր բանուոր ընտանի կենդանի: Անդրկովկա-

սում ջորին գործ է ածւում իրրե բեռնակիր և հեծնելու համար, և այս տեսակ աշխատութեան մէջ նա աւելի լաւ է ձիուց, մանաւանդ լեռնոտ, քարքարոտ և անմատչելի տեղերում, ուր հարկաւոր են հաստատուն քայլուածք և զգուշութիւն, որոնք ջորու առաւելութիւններից մէկն են: Իսկ եւրոպայում, Սպանիայում, Իտալիայում, Ջուիցերիայում, հարաւային Ֆրանսիայում, և այլն, ջորուն լծում են և սայլը և այս դէպքում նրա ընդունակութիւնը պակաս չէ ձիու ընդունակութիւնից: Սպանիայում ջորուն լծում են ամեն տեսակ կառք՝ ծանրութիւն տեղափոխելու համար, ճանապարհ գնալու համար և այլն: Յունաստանում, Բալկանեան թերակղզու տէրութիւններում, Իտալիայում և Ամերիկայի տէրութիւններում ջորին գործ է ածւում իրրե բանուոր կենդանի և հողագործութեան ասպարիզում, այսինքն նրան լրծում են գութանը, արօրը, նրա ուժով

փոցխում են հերկը, ծեծում են հացա-
բոյսը և այլն:

Անդրկովկասում իսկապէս ջորերուծու-
թեամբ, իբրեւ գիւղատնտեսութեան ճիւ-
ղով, չեն պարապում կամ պարապում են
շատ քիչ տեղերում. բայց ջորին գտնում է
համարեա ամեն գաւառներում, մանաւանդ
Քութայիսի և Գանձակի նահանգների գա-
ւառներում: Այնուամենայնիւ այս խոռոնա-
ծին, բայց վերին աստիճանի օգտուէտ
ընտանի կենդանու առաւելութիւնները և
նշանակութիւնը Անդրկովկասում շատ սա-
կաւ են ըմբռնած, որովհետեւ նրան գործ
են ածում, եթէ չհաշուենք հեծնելը, մի-
միայն իբրեւ բեռնակիր կենդանի: Սակայն
այս կենդանին մեծ ապագայ ունի, պէտք
է միայն ընդարձակել նրա գործածու-
թիւնը, մանաւանդ գիւղատնտեսութեան
աշխատութեանց մէջ:

Ջորին աւելի թանգ է գնահատում
քան թէ ձին, ուրեմն ջորերուծութիւնը,

իբրեւ անասնապահութեան ճիւղ, մեծ և
կամուտ կարող է տալ: Դարձնում ենք
մեր գիւղացիների ուշադրութիւնը այս
գիւղատնտեսական ճիւղի վրայ, որ նախ
այնքան ծախս չէ պահանջում, ինչքան
ձիաբուծութիւնը, որի համար հարկաւոր
է ունենալ ընդարձակ խոտաւէտ դաշտ,
յարմար բնակարան և լուրջ հոգատարու-
թիւն և խնամք, և երկրորդ՝ որ այս գործը
շատ արդիւնաւոր է: Միայն պէտք է աշխա-
տել պահել մերձաւորութեան համար աւելի
ընտիր տեսակի թէ էգ ձիեր և թէ որձ
էշեր, մանաւանդ մեծ ուշադրութիւն պէտք
է դարձնել վերջինների վրայ, որովհետեւ
ջորին իւր գլխաւոր օգտուէտ յատկու-
թիւնները ստանում է հօրից, թէև մայրը
նոյնպէս պէտք է լաւ ցեղից լինի: Մեր
կարծիքով աւելի ուժեղ և բարձրահասակ
ջորիներ կարող են ծնուիլ չամպղանու
մեծահասակ մոխրագոյն էշերից, նոյնպէս
և Տաճկաստանի գեղեցիկ, սպիտակ, բար-


ճրահասակ էշերից, որոնց մի քանի տե-
սակը կարելի է գտնել Քաջու քաղաքում
և նրա շրջակայքում, նոյնպէս և Պարո-
կաստանի Ատրպատականի շրջանում:

Ջորեբուծութեամբ կարող են պարա-
պել առանձին անձինք, ինչպէս լինում է
և այժմ, բայց գիւղացիներին խորհուրդ
կտանք այս ճիւղով պարապել ընկերու-
թեամբ, որովհետեւ ընկերութեան ուժով
հեշտ է Ջորեբուծութեան համար աւելի
ընտիր և թանկագին ծնողներ ունենալ,
նոյնպէս և առանձին բնակարան չինել և
ձմեռուայ ճարակ պատրաստել:

Ի վերջոյ՝ ցանկանում ենք, որ մեր
գիւղացիները ուշադրութիւն դարձնեն
Ջորու վրայ և գործածեն նրան գիւղա-
տնտեսութեան մէջ իբրեւ բանւոր կեն-
դանի: Եթէ արօրում լծում են երկու եզ,
նրանց փոխարէն բաւական կլինի լծել
մէկ ջորի, սրին աւելի հեշտ է պահել
բան թէ երկու եզն, և բացի սրանից

մի հատ ջորին հեշտութեամբ կարող է
տեղափոխել սայլով մինչև քսան, քսանե-
հինգ փութ ծանրութիւն. նա ժիր է աշ-
խատութեան մէջ քան թէ եզը, բաւա-
կանանում է չնչին, անպէտք ճարակով,
չէ պահանջում մեծ խնամք, այն ինչ ե-
ղան համար հարկաւոր է լաւ ճարակ և
առանց խնամքի նա շատ շուտ է ուժա-
թափ լինում: Երկաթեայ գութանում կա-
րելի է լծել չորս ջորի և այն ժամանակ
բոլորովին աւելորդ կլինի պահել թան-
կագին և մեծ խնամք և ծախս պահան-
ջող գոմէշներ և չորս, հինգ զոյգ եզ:





Հայկական

ժողովուրդ

հ. 1235 թ.

Հայկական

բազմաթիվ

հանդիման

ձեռքով

Հայկական

ժողովուրդ

Հայկական

ժողովուրդ

Հայկական

ժողովուրդ

Հայկական

ժողովուրդ

Հայկական

ժողովուրդ

Հայկական

ժողովուրդ


Հայկական

ժողովուրդ

Հայկական

ժողովուրդ

ՄՀ Հայագիտական գրադարան



MAL005540

